

**Տ. ԱԽԱԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՋՐՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ
(20 նոյեմբերի, 2015 թ.)**

*«Միւռոնը կը կոչուի լոյս, կը կոչուի հուր...
կը կոչուի օծում... եւ այս իւղով
պիտի փայլինք հանդերձեալ փառքին մէջ»:
(Ս. Գրիգոր Նարեկացի, Նարեկ, Բան ՂԵ.)*

Տարոյս սեպտեմբերի 27-ին՝ Վարազայ Ս. Խաչի զուտ հայկական տօնին առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցաւ սրբալոյս Միւռոնի օրհնութիւն ըստ հինաւորաց սրբազան ասանդութեանց եւ դարերու ընթացքին սահմանուած արարողական կարգի:

«Միւռոն» բառը յունական ծագում ունի եւ հայոց լեզուի մէջ տառադարձութիւնն է նոյն յունական բառին: Մեր Եկեղեցւոյ մկրտութեան կարգի ընթացքին դայլայլուած շարականը Միւռոն կը կոչէ «իւղ սրբութեան», իսկ կնունքի պահուն հոն կը բնորոշուի իբրեւ «իւղ անոյշ», որը կ'ընծայուի «յանուն Յիսուսի Քրիստոսի...» («Մաշտոց», Կարգ մկրտութեան):

Միւռոնի գործածութիւնը սուրբգրային հիմք ունի մեզի հասած Հին եւ Նոր Կտակարանաց ընդմէջէն: Հին Ուխտը յաճախապէս անդրադարձած է զանազան պարագաներու, երբ իւղով կ'օծուին յատուկ պաշտօն ունեցող անձինք՝ որպէս մարգարէ, քահանայ կամ թագաւոր: Ա. Թագաւորաց գրքում (ԺՁ. 13) Դաւիթ թագաւոր օծուեցաւ եւ մարգարէ եղաւ: Ահարոն եւ անոր որդիները քահանա օծուեցան ըստ Ելից եւ Ղևտացոց գրքերու վկայութեան (Ելք ԻԹ. 7, Ղևտ. Զ. 20): Անուշաբոյր իւղը աստուածային օրհնութեան տեսանելի եւ շօշափելի ներկայութիւնն էր եւ կը շարունակէ մնալ:

Օծման իւղի գործածութիւնը Հին Կտակարանէն անցաւ Նոր Կտակարան: Տուներուն շնորհած իր այցելութեանց ընթացքին մեր Տէրը յա-

ճախապէս անուշահոտ իւղի օծման ենթարկուեցաւ՝ իբրեւ նշան բացառիկ յարգանքի եւ սիրոյ (Յովհ. ԺԲ. 13, Դուկ. Է. 46):

Մարկոս ատետարանիչ կը վկայէ, թէ Յիսուս տասներկու առաքեալները ուղարկեց ժողովուրդին մէջ, որոնք «...շատ մը հիւանդներ իւղով կ'օծէին եւ զանոնք կը բժշկէին...» (Մարկ. Զ. 13): Յակոբոս Տեառնեղբայրն իր Ընդհանրական նամակում կը պատգամէ. «...մէկը հիւանդացաւ՝ թող կանչէ Եկեղեցւոյ երէցները, որպէսզի իր վրայ աղօթեն եւ իւղով օծեն զինք, Տիրոջ անունով» (Ե. 13): Այսպէս՝ իւղը Աստուծոյ ողորմածութեան մէկ նշանն է ու խորհրդանշը Սուրբ Հոգւոյ ներգործութեան հաւատացեալներու կեանքին մէջ: Ս. Գրիգոր Նարեկացին դիտել կուտայ, թէ Մկրտութեան ու Կնունքի խորհուրդներու ժամանակ, երբ անձը կը միտոնոյի ան կ'ստանայ զանազան շնորհներու ճառագայթ («Մատենան Ողբերգութեան», Բան ԴԵ.):

Արբազան աւանդութեան մը համաձայն՝ Միտոնը Հայաստան քերուած է Թաղէոս առաքեալի ձեռամբ: Երկու ու կէս դարեր ետք այս անուշաբոյր իւղը կը հասնի մեր հաւատոյ հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի մօտ, որը կը կատարէ նոր Միտոնի օրհնութիւն: Եւ այս օղակը Միտոնօրհնութեան կը շարունակուի մինչեւ մեր օրերը, երբ հին Միտոնը կը խառնուի նոր անուշաբոյր իւղին հետ՝ զայն վերածելով արբալոյս Միտոնի, որը երաշխիք կը հանդիսանայ քրիստոնէական հաւատքի շարունակականութեան:

Հայոց Եկեղեցւոյ արարողական կեանքին մէջ Միտոնով անձեր կը կոչուին քահանայութեան, եպիսկոպոսութեան ու կաթողիկոսութեան. կ'օծուին եկեղեցիներ, արբանկարներ ու խաչքարեր, կը մկրտուին ու կը կնքուին քրիստոնէաներ եւ կը կատարուի ջրօրհնէք:

Միտոնի պատրաստութեան նիւթերն են անարատ ձիթաիւղը, անուշաբոյր բալասանը, վարդի իւղը, 50 տեսակի համեմունքներու, արմատներու եւ ծաղիկներու հիւթերը: Միտոնօրհնութեան օրէն քառասուն օր առաջ Միտոնի կաթսան կը գետեղուի Մայր Տաճարի բեմին վրայ: Ծաղկանց հիւթի պատրաստութեան երեք օրերուն եպիսկոպոսներ կը մօտենան եւ իրենց աղօթքը կ'արտասանեն:

Միտոնօրհնութիւնը կը կատարէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շրջապատուած 12 եպիսկոպոսներով, որոնք կ'ընթերցեն սուրբգրային հատուածներ եւ աղօթքներ: Յատուկ կաթսայի մէջ զանազան հիւթերը ձիթաիւղին մէջ լեցնելէ ետք նիւթելէն զանգուածը կ'օրհնուի Կենաց Խաչով, Ս. Գեղարդով եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով: Ժամանակէ մը ի վեր

Միտոնօրհնությունը կը կատարուի եօթը տարին անգամ մը կամ երբ որ կարիքը զգացուի, երբ նոր կաթողիկոս օծուի:

Յետ արարողութեան նոր օրհնուած Միտոնը կը բաժնուի աշխարհով մէկ տարածուած հայ եկեղեցիներուն՝ անոնց առաջնորդներու միջոցաւ: Աւանդական է նոր բերուած Միտոնով թեմերու եկեղեցիներուն մէջ կատարել Զրօրհնէքի արարողութիւն՝ սրբացեալ ջուրը բաժանելով ժողովուրդին՝ որպէս օրհնութիւն ընտանեաց անդամներուն:

Հայ Միտոնը մեզի կը շաղկապէ իրարու որպէս հայու գաւակունք, կը կապէ ամէն մէկս մեր արմատներուն հետ, մեր հայրերու ու հայոց պատմութեան սխրանքներուն հետ, մեր քրիստոնէական հաւատքին հետ եւ մեզի կ'ընծայէ շնորհ ու վայելչութիւն: Հայերս յաճախ երդում կը կատարենք՝ ըսելով «Միոն վկայ»: Անձնապէս այսպիսի երդումներ լսած ենք որպէս աշակերտ Հայոց դպրոցի:

Եկէք միաբերան աղօթենք, որ սրբալոյս Միտոնի օրհնությունը մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին հետ ըլլայ ու մնայ այժմ եւ միշտ. ամէն:

